

© Association of Judges of the RA,
http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en. [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 6, 2008.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

CASE OF BACZKOWSKI AND OTHERS v. POLAND - [Armenian Translation] by the
Association of Judges of the RA

**ԲԱՍԿՈՎՍԿԻՆ ԵՎ ԱՅԼՈՔ ԸՆԴԴԵՍ
ԼԵՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ**

2007թ. մայիսի 3-ի վճիռը

CASE OF BACZKOWSKI AND OTHERS v. POLAND

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

ՓԱՍՏԵՐ

I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

1. Հավաքի նախապատրաստումը

7. Դիմողները, անհատների մի խումբ և Հավասարության հիմնադրամը (առաջին դիմողը՝ հանդիսանալով գործադիր կոմիտեի անդամ, լիազորված է սույն գործում հանդես գալու այս կազմակերպության անունից) ցանկացել են Հիմնադրամի կողմից կազմակերպված՝ 2005թ. հունիսի 10-12-ը տեղի ունենալիք Հավասարության օրերի շրջանակներում Վարչապետին երթ կազմակերպել՝ կամենալով հանրության ուշադրությունը հրավիրել սեռական, ազգային, էթնիկական, կրոնական փոքրամասնությունների, ինչպես նաև կանանց և հաշմանդամների հանդեպ խտրականության հիմնախնդրի վրա:

8. 2005թ. մայիսի 10-ին կազմակերպիչները հանդիպում են ունենեցել են Վարչապետի քաղաքային խորհրդի Անվտանգության և ճգնաժամային կառավարման ստորաբաժանման տնօրենի հետ: Այս հանդիպման ժամանակ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել են երթի ուղղության վերաբերյալ:

9. 2005թ. մայիսի 11-ին պրն Բասկովսկին ձեռք էր բերել Վարչապետի քաղաքապետարանի հրահանգը՝ «այն պահանջների վերաբերյալ, որոնք ճանապարհային երթևեկության մասին օրենքին համապատասխան պետք է պահպանվեն հասարակական հավաքների կազմակերպիչների կողմից, եթե հավաքը համարվում է «միջոցառում»՝ այդ օրենքի 65-րդ հոդվածի իմաստով:

10. 2005թ. մայիսի 12-ին կազմակերպիչները Քաղաքային խորհրդի ճանապարհային երթևեկության գրասենյակից հայցել են երթի թույլտվություն, որը պետք է մեկնարկեր Պառլամենտից (Sejm) մինչև ժողովի հրապարակ (Plac Defilad)՝ Վարչապետի կենտրոնում:

11. 2005թ. հունիսի 3-ին երթևեկության հարցերով պատասխանատու պաշտոնյան, գործելով Վարչապետի քաղաքապետի անունից, մերժել է թույլտվության տրամադրումը՝ հիմնվելով այն փաստի վրա, որ կազմակերպիչները, հակառակ իրենց պահանջի, չեն ներկայացրել «երթևեկության կազմակերպման ծրագիր»՝ ճանապարհային երթևեկության մասին օրենքի 65 (a) հոդվածի իմաստով:

12. Նույն օրը դիմողները Վարչապետի քաղաքապետին իրագրել են 2005թ. հունիսի 12-ին Վարչապետի յոթ տարբեր հրապարակներում հավաքներ կազմակերպելու իրենց մտադրության մասին: Այդ հավաքներից չորսն ուղղված էին տարբեր փոքրամասնությունների հանդեպ դրսևորվող խտրականության դեմ և վերջինիս դեմ պայքարող խմբերի ու կազմակերպությունների աջակցությանը: Մյուս երեքը պետք է ուղղված լինեին կանանց հանդեպ խտրականությանը:

13. 2005թ. հունիսի 9-ին Վարչապետի քաղաքապետն իր որոշումներով արգելել էր պրն Բասկովսկու, պրն Բիեդրոնի, պրն Կլիսինսկու, օրդ Կոստոլայի, պրն Սիպուլայի և մեկ այլ անձի՝ պրն Ն.-ի (նա դիմող չէ) կողմից կազմակերպվող հավաքների անցկացումը. այս անձինք ակտիվ գործունեություն էին իրականացնում համասեռամուլների շահերի պաշտպանության հասարակական կազմակերպությունների շրջանակներում: Իր որոշման մեջ քաղաքապետը հիմնվել էր այն փաստարկի վրա, որ համաձայն Հավաքների մասին 1990թ. օրենքի՝ հավաքները պետք է կազմակերպվեն ճանապարհային երթևեկության համար օգտագործվող ճանապարհներից հեռու: Ճանապարհներն օգտագործելու դեպքում կիրառվում են ավելի խիստ կանոններ: Կազմակերպիչները ցանկացել են օգտագործել մեքենաներով տեղափոխվող բարձրախոսներ: Նրանք չեն նշել, թե հավաքի ժամանակ այս մեքենաներն ինչպես և որտեղ են կայանելու, որպեսզի չխանգարեն երթևեկությանը, և ինչպես է կազմակերպվելու հավաքների տարբեր հատվածների միջև մարդկանց և այս մեքենաների տեղաշարժը:

14. Ավելին, հաշվի առնելով, որ ներկայացվել են նույն օրն այլ հավաքներ կազմակերպելու բազմաթիվ խնդրանքներ, որոնք ունեն դիմողների գաղափարներին և մտադրություններին հակառակ ուղղվածություն, թույլտվությունը պետք է մերժվեր՝ խուսափելու համար տարբեր ցույցերի մասնակիցների միջև բախումներից:

15. Նույն օրը մունիցիպալ իշխանությունները՝ գործելով քաղաքապետի անունից, ի պատասխան դիմողների խնդրանքի՝ թույլատրել են կանանց հանդեպ խտրականությանը վերաբերող երեք հավաքի անցկացումը:

16. Նույն օրը նույն իշխանությունները թույլատրել են 2005թ. հունիսի 12-ին վեց այլ հավաքների կազմակերպում: Վերջիններիս խորագրերն էին. «Առավել խիստ միջոցներ ընդդեմ պեդոֆիլիայի համար դատապարտվածների», «Ընդդեմ Ընկերությունների վերաբերյալ օրենքի հիման վրա ցանկացած օրենսդրական աշխատանքի», «Ընդդեմ Ընկերությունների համար քարոզի», «Քրիստոնեական արժեքների ուսուցումը բարոյական հասարակության երաշխիք», «Աստծոն և բնության օրենքները հար-

գող քրիստոնյաներն առաջին խմբի քաղաքացիներ են», «Ընդդեմ համասեռամուլ գույգերի կողմից ե-րեխաների որդեգրման»:

2. 2005թ. հունիսի 11-ին անցկացված հավաքները

17. 2005թ. հունիսի 11-ին, չնայած 2005թ. հունիսի 3-ի որոշմանը, երթը տեղի է ունեցել: Այն ընթացել է այն ուղղությամբ, որի կապակցությամբ սկզբնապես խնդրանք էր ներկայացվել 2006թ. մայիսի 12-ին: Երթին մասնակցել է գրեթե 3000 մարդ, երթը պաշտպանվել է ոստիկանների կողմից:

18. Բացի երթից, քաղաքապետի թույլտվության հիման վրա, 2005թ. հունիսի 9-ին նույն օրը տեղի է ունեցել նաև 9 հավաք (տե՛ս վերը՝ կետեր 15-16):

3. Բողոքարկման վարույթը

19. 2005թ. հունիսի 28-ին դիմող Հիմնադրամը երթի թույլտվությունը մերժող՝ 2005թ. հունիսի 3-ի որոշումը բողոքարկել է Տեղական ինքնակառավարման վերաքննիչ խորհուրդ: Փաստարկն այն էր, որ «երթևեկության կազմակերպման ծրագիր» ներկայացնելու պահանջը չի ունեցել որևէ իրավական հիմք, և մինչև մերժումը դիմողներից երբևէ նման փաստաթուղթ չի պահանջվել: Փաստարկվել է նաև, որ այդ որոշումը սահմանափակել է իրենց հավաքների ազատությունը, և դա թելադրված էր ժողովրդավարության հետ անհամատեղելի գաղափարախոսությամբ:

20. 2005թ. օգոստոսի 22-ին Խորհուրդը վերացրել է վիճարկվող որոշումը՝ այն համարելով անօրինական: Խորհուրդը նկատել է, որ վարչական վարույթի կիրառելի դրույթների համաձայն՝ իշխանությունները պարտավոր են ապահովել վարչական վարույթի կողմերի արդյունավետ մասնակցության հնարավորությունը: Դիմողների գործում այս պարտավորությունը չի կատարվել, քանզի գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ դիմող Հիմնադրամը տեղեկացվել է գործի նյութերին ծանոթանալու իր դատավարական իրավունքի մասին:

Խորհրդի որոշման մեջ այնուհետև նշվել է.

«Առաջին ատյանի մարմինն իր որոշումը հիմնավորել է այն հանգամանքով, որ գործի նյութերում բացակայում է երթևեկության կազմակերպման ծրագիրը: 65(a) բաժնի 3(9) կետի համաձայն ցույցի կազմակերպիչը պարտավոր է ոստիկանության հետ համատեղ մշակել նման ծրագիր, եթե նման պահանջ ներկայացվել է համապատասխան մարմնի կողմից: Այնուամենայնիվ, գործի նյութերում ոչինչ չի վկայում այն մասին, որ նման ծրագիր մշակելու պահանջ ներկայացվել է: Միջոցառում կազմակերպելու համար թույլտվություն ձեռք բերելու ընթացակարգի վերաբերյալ փաստաթուղթը, որը տրամադրվել է կազմակերպիչներին, նույնպես չի պարունակում տեղեկություն նման պահանջի վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ կազմակերպիչների խնդրանքը վերաբերել է 2005թ. հունիսի 11-ին կայանալիք երթին և նաև հաշվի առնելով, որ բողոքը Խորհրդի գրասենյակում ստացվել է 2005թ. հունիսի 28-ին, գործի քննությունը դառնում է աննպատակ»:

b) Հավաքները

21. 2005թ. հունիսի 10-ին դիմողները վեց հավաք կազմակերպելու թույլտվության՝ քաղաքապետի 2005թ. հունիսի 9-ի մերժումը բողոքարկել են Մազովչեի կառավարչին: Նրանք պնդել են, որ խախտվել է Սահմանադրությամբ երաշխավորված՝ իրենց հավաքների ազատությունը, և հավաքները պետք է լինեին լիովին խաղաղ: Նրանք նշել են, որ հավաքները որևէ վտանգ չեն ներկայացրել հասարակական կարգի կամ բարքերի համար: Նրանք առարկել են որոշման մեջ նշված այն փաստարկի դեմ, որ իրենք պարտավոր էին ներկայացնել հավաքների անցկացման վայրերի միջև ծրագրված ուղու մասին փաստաթուղթ՝ պնդելով, որ իրենք մտադիր էին հավաքներ անցկացնել միայն տեղում, այդ վայրերի միջև մարդկանց շարժ տեղի չէր ունենանալու և իրենք չէին կարող պատասխանատու լինել նման շարժի կազմակերպման կամ վերահսկողության համար:

22. 2005թ. հունիսի 17-ին Մազովչեի կառավարիչն ընդունել է 6 նմանատիպ որոշում, որոնցով վերացրել է հավաքների անցկացման թույլտվության՝ 2005թ. հունիսի 9-ի մերժումները:

Առաջին հերթին նշվել է, որ այդ որոշումներով օրենքի խախտումը դրսևորվել է նրանում, որ կողմերին տրամադրվել են որոշումների պատճենները, մինչդեռ վարչական վարույթի վերաբերյալ օրենքին համապատասխան նրանց պետք է տրամադրվեին որոշումների բնօրինակները: Նշվել է նաև, որ քաղաքապետն այդ որոշումների մասին մամուլին տեղեկացրել է նախքան դրանք կողմերին տրամադրելը, ինչն ակնհայտորեն խախտում է վարչական վարույթի սկզբունքները:

23. Այնուհետև նշվել է, որ Հավաքների մասին 1990թ. օրենքը հավաքների ազատության երաշխիք է հանդիսանում ինչպես հավաքների կազմակերպման, այնպես էլ մասնակցության համար: Սահմանադրությունը հստակորեն երաշխավորում է հավաքների ազատությունը և ոչ թե իրավունքը: Պետության խնդիրը չէ սահմանել հավաքների իրավունքը. պետության պարտավորությունը սահմանափակվում է հավաքների խաղաղ անցկացումն ապահովելով: Այս ձևով կիրառելի օրենքը չի նախատեսում որևէ թույլտվություն հավաքի անցկացման համար:

24. Կառավարիչը նշել է, որ ճանապարհային երթևեկության մասին օրենքի դրույթների վրա հիմնված՝ ճանապարհի հատվածը զբաղեցնելու թույլտվություն տրամադրելու պահանջը չունի որևէ իրավական հիմք Հավաքների մասին օրենքում: Քաղաքապետը ենթադրել է, որ ցույցը կզբաղեցնի ճանապարհի մի հատվածը, բայց չի ձեռնարկել որևէ քայլ պարզելու համար, թե արդյոք դա կազմակերպիչների մտադրությունն է. մինչդեռ նա պարտավոր էր դա անել ըստ օրենքի:

Նաև նշվել է, որ հավաքն արգելող որոշումը պետք է դիտվեր որպես ծայրահեղ միջոց, քանի որ այն արմատապես սահմանափակում է հավաքների ազատությունը: Համամասնության սկզբունքը պահանջում է, որ սահմանադրորեն պաշտպանվող յուրաքանչյուր ազատության սահմանափակում թույլատրվի այնքանով, որքանով այն թելադրվում է տվյալ գործի կոնկրետ հանգամանքներով:

25. Կառավարիչն այս կապակցությամբ նշել է, որ քաղաքապետի հիմնավորումն առ այն, որ առկա է դիմողների կողմից կազմակերպվող ցույցի և նույն օրն այլ անձանց կողմից կազմակերպվող հակացույցի մասնակիցների միջև բախման վտանգ, արդարացված չէ: Դա հավասարազոր է նրան, որ վարչակազմն ընդունում է կազմակերպիչների մտադրությունն առ այն, որ նրանք հստակորեն և կանխամտածված խախտելու են հասարակական կարգը, մինչդեռ Հավաքների մասին օրենքով երաշխավորված արտահայտվելու ազատության պաշտպանությունը պետք է լինի էական խնդիր հանրային իշխանությունների համար:

26. Այնուհետև վարույթը կարճվել է, քանի որ այն ժամանակավրեպ էր. հավաքները տեղի էին ունեցել 2005թ. հունիսի 11-ին:

4. «Gazeta Wyborcza»-ում 2005թ. մայիսի 20-ին հրատարակված՝ Վարչավայի քաղաքապետի հարցազրույցի թարգմանությունը

27. «Է. Սիդլեկա: Հավաքների մասին օրենքն ասում է, որ հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն, եթե ցույցը կարող է վտանգ ստեղծել կյանքի կամ անձնական անձեռնմխելիության համար, կամ մեծ վտանգ՝ գույքի համար: Արդյո՞ք երթի կազմակերպիչներն իրենց գրանցման խնդրանքում նշել են նման վտանգի մասին վկայող որևէ բան:

Վարչավայի քաղաքապետ: Ես չգիտեմ, ես չեմ կարդացել խնդրանքը: Բայց ես կարգելեմ ցույցը՝ անկախ նրանից, թե նրանք ինչ են գրել: Ես սեռական խտրականության հիմքով խտրականության կողմնակից չեմ՝ օրինակ, մարդկանց մասնագիտական կարիերան կործանելու միջոցով: Բայց համասեռամուլների օգտին հրապարակային քարոզչություն չպետք է լինի:

Է. Ս.: Այն, ինչ անում եք Դուք, հստակ խտրականություն է. Դուք անձանց հնարավորություն չեք տալիս օգտվելու իրենց ազատությունից միայն այն պատճառով, որ նրանք ունեն հատուկ սեռական ուղղվածություն:

Վ. քա: Ես նրանց չեմ արգելում ցույց անել, եթե նրանք ցանկանում են ցույց անել որպես քաղաքացիներ և ոչ թե որպես համասեռամուլներ:

Է. Ս.: Ամեն ինչ ասում է այն մասին, որ, անցյալ տարվա մեծ, Կառավարիչը կվերացնի Ձեր արգելումը: Եվ եթե կազմակերպիչները դիմեն վարչական դատարան, նրանք կշահեն, քանի որ հավաքների ազատության կանխարգելիչ սահմանափակումն անօրինական է: Սակայն բողոքարկման վարույթը կտևի երկար, որի ընթացքում կանցնի երթի պլանավորված օրը: Սա ա՞յն է, ինչ Դուք ցանկանում եք:

Վ. քա: Կտեսնենք՝ նրանք կշահեն, թե կպարտվեն: Ես թույլ չեմ տա ինձ համոզել տալու մեծ ցույցի թույլտվություն:

Է. Ս.: Գի՞շտ է, որ մարդկանց սահմանադրական իրավունքների իրականացումը կախված է իշխանությունների տեսակետներից:

Վ. քա: Իմ կարծիքով, համասեռամուլության քարոզչության հավասարազոր չէ անձի՝ հավաքների ազատության իրականացմանը»:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Սահմանադրության համապատասխան դրույթները

28. Սահմանադրության 27-րդ հոդվածը սահմանում է.

«խաղաղ հավաքների և նման հավաքներին մասնակցության ազատությունը երաշխավորվում է: Այս ազատության սահմանափակումները կարող են սահմանվել օրենքով»:

29. Սահմանադրության 79-րդ հոդվածի 1-ին կետը, որն ուժի մեջ է մտել 1997թ. հոկտեմբերի 17-ին, նախատեսում է.

«Օրենքով սահմանված սկզբունքներին համապատասխան՝ յուրաքանչյուր ոք, ում սահմանադրական ազատությունները կամ իրավունքները խախտվել են, իրավունք ունի դիմելու սահմանադրական տրիբունալ՝ վիճարկելով այն օրենքի կամ այլ նորմատիվ ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը, որի հիման վրա դատարանը կամ վարչական մարմինը վերջնական որոշում է կայացրել Սահմանադրությամբ նախատեսված իր ազատությունների կամ իրավունքների կամ պարտականությունների վերաբերյալ»:

30. Սահմանադրության 30-րդ հոդվածը նախատեսում է.

«1.Սահմանադրական տրիբունալի որոշումները պարտադիր են բոլորի համար և վերջնական են:

2. Սահմանադրական տրիբունալի որոշումները... պետք է հրատարակվեն առանց ձգձգումների:

3. Սահմանադրական տրիբունալի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից. այնուամենայնիվ, սահմանադրական տրիբունալը կարող է մատնանշել նորմատիվ ակտի ուժը կորցնելու այլ օր: Նման ժամկետը չի կարող գերազանցել 18 ամիսը՝ օրենքի առնչությամբ, և 12 ամիսը՝ որևէ այլ նորմատիվ ակտի առնչությամբ:...»:

2. Հավաքների մասին օրենքը

31. Հավաքների մասին օրենքի 1-ին բաժնի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատություն: Առնվազն 15 անձի հավաքը, որոնք հավաքվել են տվյալ հարցի շուրջ հրապարակային բանավեճի մասնակցելու կամ իրենց կարծիքն արտահայտելու համար, համարվում է հավաք՝ օրենքի իմաստով:

32. 2-րդ բաժնի համաձայն՝ հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով և եթե անհրաժեշտ է ազգային անվտանգության կամ հանրության անվտանգության, առողջության և բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

33. Հավաքների ազատության իրականացման վերաբերյալ բոլոր որոշումները պետք է կայացվեն այն տեղական մունիցիպալիտետների կողմից, որտեղ հավաքը պետք է անցկացվի: Այս որոշումները կարող են բողոքարկվել Կառավարչին:

34. Օրենքի 3-րդ բաժնի համաձայն՝ մունիցիպալիտետը պետք է կազմակերպիչների կողմից տեղեկացվի բաց երկնքի տակ չորոշակիացված թվով անձանց մասնակցությամբ հանրային հավաք կազմակերպելու մտադրության մասին: 7-րդ բաժնի համաձայն՝ նման տեղեկությունը մունիցիպալիտետին պետք է ներկայացվի ցույցի համար նախատեսված օրվանից ոչ շուտ, քան 30 օր առաջ, և ոչ ուշ, քան երեք օր առաջ: Նման տեղեկությունը պետք է ներառի կազմակերպիչների անուններն ու հասցեները, ցույցի նպատակն ու ծրագիրը, վայրը, ամիս-ամսաթիվը, ինչպես նաև տեղեկություն ուղու մասին, եթե կազմակերպիչները մտադիր են տեղափոխվել մի վայրից մյուսը:

35. 8-րդ բաժնի համաձայն՝ մունիցիպալիտետը կարող է թույլտվություն չտալ, եթե ցույցի նպատակը խախտում է ինքնին օրենքը կամ քրեական օրենսգրքի դրույթները, կամ եթե այն կարող է վտանգել անձանց կյանքը կամ ֆիզիկական անձեռնմխելիությունը, կամ մեծ վտանգ ներկայացնել գույքի համար:

36. Առաջին ատյանի կարգով ցույցի թույլտվության մերժումը պետք է կազմակերպիչներին տրամադրվի վերջիններիս կողմից համապատասխան խնդրանքը ներկայացնելուց հետո երեք օրվա ընթացքում և ոչ ուշ, քան ցույցի համար նախատեսված օրվանից երեք օր առաջ: Նման մերժումը կարող է բողոքարկվել այն ստանալուց հետո երեք օրվա ընթացքում: Նման բողոք ներկայացնելը չի կանխում ցույցի անցկացման թույլտվության մերժման գործողությունը:

37. Բողոքի կապակցությամբ որոշումը կայացվում է բողոքը ներկայացնելուց հետո երեք օրվա ընթացքում:

3. Ճանապարհային երթևեկության մասին օրենքը

38. Ճանապարհային երթևեկության մասին 1997թ. օրենքի 65-րդ բաժնի՝ փոփոխված 2003թ., համաձայն այնպիսի մարզական միջոցառումների, մրցույթների, հավաքների և այլ միջոցառումների կազ-

մակերափիչները, որոնք կարող են խանգարել ճանապարհային երթևեկությանը, պարտավոր են ձեռք բերել նման հավաքների անցկացման թույլտվություն:

39. 65-րդ բաժնի՝ համակցված օրենքի 65(a) բաժնի հետ, համաձայն նման միջոցառումների կազմակերպիչները պարտավոր են կատարել այդ դրույթում թվով 9 կետերով թվարկված որոշակի վարչական պարտականություններ, ներառյալ՝ երթևեկության կազմակերպման պլանի ներկայացումն իշխանություններին:

40. Այս դրույթներն անվավեր են ճանաչվել սահմանադրական տրիբունալի ներքոհիշյալ որոշմամբ:

4. Սահմանադրական տրիբունալի 2006թ. հունվարի 18-ի որոշումը

41. 2006թ. հունվարի 18-ի իր նիստում, Օմբուդսմենի դիմումի հիման վրա, քննության է առել ճանապարհային երթևեկության մասին օրենքով հասարակական միջոցառումների կազմակերպիչներին ներկայացվող պահանջների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը՝ այն կապակցությամբ, որոնք խախտում են հավաքների ազատությունը՝ այն ենթարկելով չափից ավելի մեծ սահմանափակումների:

42. Հունվարի 13-ին նշված գործով որոշման մեջ Սահմանադրական դատարանը նկատել է, որ բարձրացված սահմանադրական հիմնախնդիրը կայանում է նրանում, թե արդյոք օրենքի 65-րդ բաժնով սահմանված պահանջները համապատասխանում են արտահայտվելու ազատությանը, ինչպես այն ձևակերպված է Սահմանադրության մեջ և իր զարգացումն է ստացել Հավաքների մասին օրենքում: Դատարանը նկատել է, որ Հավաքների մասին 1990թ. օրենքը հիմնվում է այն ելակետի վրա, որ այս ազատության իրացումը չի պահանջում պետության կողմից որևէ արտոնում կամ թույլտվություն: Լինելով ազատություն՝ այն պետությունից պահանջում է ձեռնպահ մնալ դրա իրացմանը խոչընդոտելուց և երաշխավորել, որ դրանից օգտվեն տարբեր խմբեր՝ անկախ մեծամասնության տեսակետին նրանց տեսակետների անհամապատասխանության փաստից:

43. Հետևաբար, Հավաքների մասին օրենքը նախատեսում է մի համակարգ, որը հիմնվում է կազմակերպվող հավաքի գրանցման վրա, և ոչ ավելին:

Տրիբունալը նկատում է, որ հետագայում օրենսդիրը ճանապարհային երթևեկության մասին օրենքն ընդունելիս՝ դրանում ներառել է տարբեր վարչական պահանջներ, որոնք դժվար է բավարարել մարզական միջոցառումների, մրցումների և հավաքների կազմակերպման գործընթացում՝ դրանով գրանցման համակարգը փոխարինելով թույլտվության համակարգով: Այս միջոցով Հավաքների մասին օրենքի շրջանակներում հավաքի իմաստը նույնացվել է առևտրային բնույթի կամ ձեռնարկատիրական նպատակներով կազմակերպվող միջոցառումների հետ: Սա անհամատեղելի է ժողովրդավարական հասարակությունում արտահայտվելու ազատության զբաղեցրած հատուկ դիրքի հետ և նվազեցնում է Սահմանադրությամբ ու Հավաքների մասին օրենքով հավաքներին իրավական համակարգում վերապահված հատուկ դերը: Տրիբունալը նաև հաշվի է առել այն, որ ճանապարհային երթևեկության մասին օրենքով սահմանված պահանջների ցանկը ներառում է ոչ պակաս, քան թվով 19 տարբեր վարչական պարտավորություններ: Օրենքով սահմանված՝ հավաքների ազատության սահմանափակումները խախտել են Սահմանադրությամբ երաշխավորվող բոլոր իրավունքների սահմանափակումների նկատմամբ կիրառելի համաչափության պահանջը:

44. Տրիբունալը գտել է, որ ճանապարհային երթևեկության մասին օրենքի 65-րդ բաժինը հակասում է Սահմանադրությանը՝ այնքանով, որքանով այն առնչվում է հավաքներին:

ԻՐԱՎՈՆՔԻ ՀԱՐՑԵՐ

I. ԿՈՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

A. Արդյո՞ք դիմողներն ունեն զոհի կարգավիճակ

45. Կառավարությունն իր նախնական առարկություններում պնդել է, որ դիմողները՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով չունեն զոհի կարգավիճակ: Երկրորդ աստիճանի կարգով կայացված վարչական որոշումների գրավոր հիմնավորումներից Կառավարությունը բխեցրել է, որ վերաքննիչ մարմինները լիովին համամիտ են եղել դիմողների փաստարկներին և ամբողջությամբ վերացրել են վիճարկվող որոշումները: Կառավարիչն իր 2005թ. հունիսի 17-ի որոշման մեջ (տես վերը՝ կետ 22) նույնիսկ զնացել է ավելի հեռուն՝ նշելով, որ ցույցի արգելումն այն հիմքով, որ առկա է ցուցարարների և հակա-

ցուցարարների միջև բախման վտանգ, հավասարազոր է նրան, որ վարչակազմն ընդունում է կազմակերպիչների մտադրությունն առ այն, որ նրանք հստակորեն և կանխամտածված խախտելու են հասարակական կարգը: Վիճարկվող որոշումները վերացնելիս վերաքննիչ մարմինները նշել են, որ իրենց զննատականները տվել են հաշվի առնելով դիմողների հավաքների ազատությունը: Քանի որ այս որոշումներն ի վերջո ճանաչվել են անհիմն, դիմողները չեն կարող հավակնել զոհի կարգավիճակ ունենալուն:

46. Կառավարությունն այն կարծիքին է, որ քանզի դիմողները չեն պահանջել որևէ նյութական կամ ոչ նյութական վնասի հատուցում, ներպետական իշխանությունները չունեն նրանց որևէ հատուցում առաջարկելու պարտավորություն: Դիմողի օգտին կայացված որոշումը կամ միջոցն սկզբունքորեն բավարար չէ նրան «զոհի» կարգավիճակից զրկելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ներպետական իշխանություններն ակնհայտորեն կամ ըստ էության ճանաչել են Կոնվենցիայի խախտում և այնուհետև տրամադրել հատուցում (եկլեն ընդդեմ Գերմանիայի, 1982թ. հունիսի 15-ի վճիռ, Շարքեր A. թիվ 51, կետ 66):

47. Դիմողները գտել են, որ Կառավարության կողմից մատնանշված էկլեն ընդդեմ Գերմանիայի գործը սույն գործի հետ քիչ առնչություն ունի: Նրանք նշել են, որ Կոնվենցիոն սուբսիդիար պաշտպանության մեխանիզմը գանգատի քննությունը բացառում է միայն այն դեպքում, երբ միաժամանակ բավարարվել են այդ երկու պայմանները (տե՛ս Սկորդիոնոն ընդդեմ Իտալիայի (dec.), թիվ 36813/, 2003թ. մարտի 27): Իրենց գործում չի կարելի ասել, որ երկու պայմաններն էլ բավարարվել են: Իրենց գանգատում նշված կոնվենցիոն ոչ մի խախտման համար որևէ հատուցում չի տրամադրվել:

48. Դատարանը կրկնում է, որ գանգատի ընդունելիության որոշմամբ այն հարցի քննությունը, թե արդյոք դիմողներն ունեն իրենց իրավունքների խախտման զոհի կարգավիճակ, միավորվել է ըստ էության գործի քննությանը (տե՛ս վերը՝ կետ 5): Դատարանը հաստատում է իր մտեցումը:

B. Ներպետական պաշտպանության միջոցների սպառումը

49. Կառավարությունը նշել է, որ դիմողներն իրենց տրամադրության տակ ունեցել են ընթացակարգեր, որոնք հնարավորություն էին տալիս վերականգնել հավաքների խախտված ազատությունը: Հավաքների մասին օրենքի 7-րդ բաժինը սահմանում է ժամկետներ, որոնք այդ օրենքի հիման վրա հավաք կազմակերպելու մտադրություն ունեցող անձինք պարտավոր են պահպանել: Կազմակերպվելիք հավաքի վերաբերյալ որոշում ստանալու խնդրանքով պետք է մուծիցիպալիտետ դիմել ցույցի պլանավորված օրվանից ոչ ուշ, քան երեսուն օր առաջ, և ոչ ուշ, քան երեք օր առաջ:

50. Եթե դիմողները գտել են, որ այն դրույթները, որոնց հիման վրա իրենց առնչությամբ ներպետական որոշումները կայացվել են, չեն համապատասխանում Սահմանադրությանը, նրանք կարող են այդ դրույթների սահմանադրականությունը վիճարկել Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված սահմանադրական գանգատ ներկայացնելու միջոցով: Ուստի դիմողները կարող էին հասնել այն նպատակին, ինչին ձգտում են հասնել Դատարան դիմելով, այն է՝ արդյոք վիճարկվող դրույթները՝ ինչպես կիրառվել են իրենց գործում, խախտել են Կոնվենցիայով երաշխավորված իրենց իրավունքները:

51. Կառավարությունը նշել է, որ Դատարանը վճռել է, որ Լեհաստանում սահմանադրական գանգատը կարող է ճանաչվել որպես պաշտպանության արդյունավետ միջոց, եթե Կոնվենցիան ենթադրաբար խախտող անհատական որոշումն ընդունվել է ներպետական օրենսդրության հակասահմանադրական դրույթի անմիջական կիրառմամբ (Սզոտ-Մեդիսկան ընդդեմ Լեհաստանի (dec.) թիվ 47414/99, 2003թ. հոկտեմբերի 9): Կառավարությունը պնդել է, որ դիմողները պետք է օգտագործեին այս պաշտպանության միջոցը:

52. Դիմողներն առարկել են: Նրանք նշել են, որ իրենց գործի հատուկ բնույթից ելնելով՝ պաշտպանության միջոցը, որը չէր կարող մինչև 2005թ. հունիսի 11-ը նրանց տրամադրել դատական կամ վարչական վերահսկողություն հավաքներն անցկացնելու արգելքի նկատմամբ, չէր կարող համարվել արդյունավետ: Ուստի սահմանադրական տրիբունալի կողմից որևիցե հետագա վերահսկողություն իրենց համար չէր կարող ունենալ որևիցե գործնական նպատակ:

53. Ամեն դեպքում, եթե նույնիսկ ընդունելի լիներ, որ ex post facto վերահսկողությունը կարող էր իրենց դեպքում համարվել պաշտպանության միջոց, այնուամենայնիվ, այն չէր կարող համարվել արդյունավետ միջոց նաև այլ պատճառներով: Լեհական իրավունքում սահմանադրական գանգատը պաշտպանության միջոց է, եթե հնարավոր է սահմանադրական տրիբունալի՝ տվյալ անձի համար շահավետ որոշման հիման վրա նորոգել սկզբնական վարույթը: Այս պայմանն արդեն այդ պաշտպանության միջոցը դարձնում է ամարդյունավետ, քանզի իրենց գործի նորոգումն ամբողջությամբ ոչ գործնական և ժամանակավրեպ լուծում էր: Ավելին, վերջնական որոշումների վերացումն անօգուտ էր, քանի

որ 2005թ. հունիսի 3-ի և 9-ի որոշումներն արդեն իսկ վերացվել էին Ինքնակառավարման վերաքննիչ խորհրդի և Մազովչեի նահանգի կառավարչի համապատասխանաբար 2005թ. հունիսի 17-ի և օգոստոսի 22-ի որոշումներով:

54. Դատարանը կրկնում է, որ գանգատի ընդունելիության որոշմամբ պաշտպանության միջոցներն սպառելու հարցի քննությունը միավորվել է ըստ էության գործի քննությանը (տես վերը՝ կետ 5): Դատարանը հաստատում է իր մոտեցումը:

II. ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ

A. Կոնվենցիայի 11-րդ հոդվածի վիճարկվող խախտում

55. Դիմողները գանգատվել են, որ իրենց նկատմամբ ներպետական իշխանությունների կողմից համապատասխան ներպետական օրենսդրության կիրառման արդյունքում խախտվել է խաղաղ հավաքի իրենց իրավունքը: Նրանք վկայակոչել են Կոնվենցիայի 11-րդ հոդվածը, որը նախատեսում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ»:

1. Կողմերի փաստարկները

56. Ըստ Կառավարության՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորվող՝ դիմողների իրավունքներին որևէ միջամտություն տեղի չի ունեցել: Այս կապակցությամբ Կառավարությունը հղում է կատարել զոհի կարգավիճակի առնչությամբ իր ներկայացրած փաստարկներին (տես վերը՝ կետեր 45-48):

57. Կառավարությունը չի վիճարկել, որ ներպետական իշխանությունների կողմից երկրորդ աստիճանի որոշումները կայացվել են հավաքների անցկացման համար ծրագրված օրվանից հետո: Այնուամենայնիվ, դիմողները տեղյակ են եղել հավաք անցկացնելու թույլտվության համար խնդրանքով դիմելու՝ օրենքով սահմանված ժամկետներին:

58. Դիմողները գանգատվել են, որ խաղաղ հավաքի իրենց իրավունքը խախտվել է իրենց նկատմամբ ներպետական իշխանությունների կողմից համապատասխան ներպետական օրենսդրության կիրառման արդյունքում: Հավաքների ազատության բնույթից բխում է, որ հանրային հավաքների կազմակերպիչների համար օրենքով սահմանված պահանջները պետք է հասցվեն ողջամիտ նվազագույնի և ունենան տեխնիկական բնույթ:

59. Հավաքների մասին 1990թ. օրենքի համաձայն՝ իշխանությունները կարող են արգելել հավաքների կազմակերպումը, եթե դրա նպատակը հակադրվում է քրեական իրավունքի դրույթներին կամ այն կարող է վտանգ ներկայացնել մարդկանց կյանքի կամ անձնական անձեռնմխելիության համար կամ մեծ վտանգ՝ զույքի համար: Մյուս կողմից՝ այն դեպքում, երբ տվյալ հավաքը Հավաքների մասին և ճանապարհային երթևեկության և հավաքների օրենքների հիման վրա իշխանությունների կողմից որակվում է որպես «միջոցառում», կազմակերպիչներին ներկայացվող պահանջները շատ ավելի հեռուն են գնում: Դրանք զուրկ են հստակությունից, և կազմակերպիչների կողմից այդ պահանջների կատարման գնահատականն ամբողջությամբ կախվածության մեջ են դնում իշխանությունների հայեցողությունից:

60. Ըստ դիմողների՝ քաղաքապետի մերժումը չունի պատշաճ հիմնավորում: Կազմակերպվելիք հավաքներն ունեին խաղաղ բնույթ, դրանց նպատակն էր հանրության ուշադրությունը հրավիրել խտրականության ենթարկվող անձանց տարբեր խմբերի վրա, մասնավորապես, համասեռամուլական հակվածություն ունեցող անձանց վրա: Համապատասխան խնդրանքները համապատասխանել են Հավաքների մասին օրենքով նախատեսված խիստ սահմանափակ պահանջներին: Ինչ վերաբերում է Հավասարության երթին, մերժումը պատճառաբանվել է նրանով, որ դիմողները չեն ներկայացրել երթևե-

կության կազմակերպման ծրագիր, որն իշխանությունները երբևէ չեն պահանջել մինչև իրենց մերժումը: Այդ հավաքներն ունեին օրինական նպատակներ և մերժման համար չունեին այնպիսի հատուկ հիմքեր, ինչպիսիք են գույքին սպառնացող մեծ վտանգը կամ կյանքին կամ անձնական անձեռնմխելիությանն սպառնացող վտանգը:

2. Դատարանի գնահատականը

61. Ինչպես բազմիցս նշվել է Դատարանի վճիռներում, ժողովրդավարությունը ոչ միայն եվրոպական հասարակական կարգի հիմնարար հատկանիշն է, այլ նաև Կոնվենցիան նպատակաուղղված է ժողովրդավարական հասարակության գաղափարներն ու արժեքները խրախուսելուն և պահպանելուն: Ժողովրդավարությունը Կոնվենցիայով նախատեսված միակ քաղաքական մոդելն է. այն միակ մոդելն է, որը համապատասխանում է Կոնվենցիային: Կոնվենցիայի 11-րդ հոդվածի, ինչպես նաև 8, 9 և 10-րդ հոդվածների երկրորդ մասերի ձևակերպումների ուժով՝ այդ հոդվածներով երաշխավորված իրավունքներին միջամտությունն արդարացնող միակ անհրաժեշտությունն այն է, որը կարող է բխել «ժողովրդավարական հասարակությունից» (տե՛ս Ռաֆահ Փարթիզին և այլոք ընդդեմ Թուրքիայի, թիվ 41340/98, 41342/98, 41343/98 և 41344/98, կետեր 86-89, ECHR 2003-II, Քրիստոնեական ժողովրդավարական ժողովրդական կուսակցությունն ընդդեմ Սոլդովայի, 28793/02, 2006թ. մայիսի 14):

62. Մինչ 11-րդ հոդվածի համատեքստում Դատարանը բազմիցս վկայակոչել է բազմակարծությունը և ժողովրդավարությունը երաշխավորելու գործում քաղաքական կուսակցությունների ունեցած էական դերը, այլ նպատակներով ստեղծված միավորումները ևս կարևոր նշանակություն ունեն ժողովրդավարության պատշաճ գործառնության համար: Բազմակարծությունը նաև կառուցվում է մշակութային ավանդույթների, էթնիկական և մշակութային ինքնությունների, կրոնական համոզմունքների, արվեստագիտական, գրական և սոցիալ-տնտեսական գաղափարների և հայեցակարգերի բազմազանության ու դինամիկայի ճանաչման և հարգանքի վրա: Տարբեր ինքնությամբ անձանց և խմբերի միջև ներդաշնակ հարաբերություններն էական նշանակություն ունեն սոցիալական համերաշխության հասնելու համար: Բնական է այն, որ եթե քաղաքացիական հասարակությունը գործում է առողջ կերպով, ապա ժողովրդավարական գործընթացներին քաղաքացիների մասնակցությունը մեծապես ապահովվում է միավորումներին նրանց անդամակցության միջոցով, որոնք կարող են ինտեգրվել մեկը մյուսին և կոլեկտիվ կերպով հետապնդել ընդհանուր խնդիրներ (տե՛ս Գորգելիկը և այլոք ընդդեմ Լեհաստանի, թիվ 44158/98, կետ 92, 2004թ. փետրվարի 17):

63. Վկայակոչելով «ժողովրդավարական հասարակության» բնորոշ հատկանիշները՝ Դատարանն առանձնահատուկ կարևորություն է վերապահում բազմակարծությանը, հանդուրժողականությանը և ազատամտությանը: Այս համատեքստում, Դատարանը գտել է, որ չնայած անհատական շահերը պետք է առանձին դեպքերում ստորադասվեն խմբի շահերին, այնուամենայնիվ, ժողովրդավարությունը պարզապես չի ենթադրում, որ մշտապես պետք է գերակայեն մեծամասնության տեսակետները. պետք է ապահովվի հավասարակշռություն, որը կերաշխավորի արդարացի և պատշաճ վերաբերմունք փոքրամասնությունների նկատմամբ և կկանխի դոմինանտ դիրքի չարաշահումը (տե՛ս Յանգը, Ջեյմսը և Վեբստերն ընդդեմ Միացյալ Թագավորության, 1981թ. օգոստոսի 13, Շարքեր A թիվ 44, էջ 25, կետ 63, և Չասագնուն և այլոք ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 25088/95 և 28443/95, ECHR 1999-III, էջ 65, կետ 112):

64. «Informationsverein Lentia»-ն և այլոք ընդդեմ Ավստրիայի (1999թ. նոյեմբերի 24-ի վճիռ, Շարքեր A թիվ 276) Դատարանը պետությունը բնութագրել է որպես բազմակարծության սկզբունքի երաշխավոր (տե՛ս 1999թ. նոյեմբերի 24-ի վճիռ, Շարքեր A թիվ 276, էջ 16, կետ 38): Միավորվելու և հավաքների ազատության իրական և արդյունավետ պաշտպանությունը չի կարող սահմանափակվել պարզապես պետության չմիջամտելու պարտականությամբ. զուտ բացասական (նեգատիվ) հայեցակարգը չի կարող համապատասխանել ոչ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի նպատակին և ոչ էլ Կոնվենցիային: Ուստի կարող են լինել այս ազատություններից արդյունավետորեն օգվելը երաշխավորող պոզիտիվ պարտականություններ (տե՛ս Wilson & the National Union of Journalists և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 30668/96, 30671/96 և 30678/96, կետ 41, ECHR 2002-V, Օրանիո Տոքսոն ընդդեմ Յունաստանի, թիվ 74989/01, 2005թ. հոկտեմբերի 20, կետ 37): Այս պարտականությունը որոշակի կարևորություն ունի ոչ հայտնի տեսակետներ ունեցող կամ փոքրամասնությունների պատկանող անձանց համար, քանի որ նրանք առավել խոցելի են:

65. Այս կապակցությամբ, Դատարանը կրկնում է, որ համաձայն կոնվենցիոն մարմինների հաստատուն մոտեցման՝ իրավունքների կամ ազատությունների խախտման «զոն» բառը մատնանշում է այն անձին, ով ուղղակիորեն կրել է խնդրո առարկա գործողության կամ անգործության ազդեցությունը (տե՛ս Մարքսն ընդդեմ Բելգիայի, 1979թ. հունիսի 13-ի վճիռ, Շարքեր A թիվ 31, կետ 27, և Դուդգեոնն ընդդեմ Միացյալ Թագավորության, 1981թ. հոկտեմբերի 22-ի վճիռ, Շարքեր A թիվ 45, կետ 41):

66. Անդրադառնալով սույն գործին՝ Դատարանը նկատում է, որ իշխանություններն արգելել են ծրագրված երթի և վեց հավաքների կազմակերպումը: Վերաքննիչ մարմիններն իրենց 2005թ. հունիսի 17-ի և օգոստոսի 22-ի որոշումներով վերացրել են առաջին ատյանի որոշումները և քննադատել են դրանք՝ թույլ հիմնավորվածության և կիրառելի օրենքների խախտման համար: Այս որոշումները կայացվել են դիմողների կողմից ցույցերի անցկացման ծրագրված օրվանից հետո:

67. Դատարանն ընդունում է, որ հավաքներն ի վերջո տեղի են ունեցել ծրագրված օրերին: Այնուամենայնիվ, դիմողները դիմել են ռիսկի՝ հաշվի առնելով այդ ժամանակ ուժի մեջ գտնվող պաշտոնական արգելքները: Հավաքները տեղի են ունեցել առանց օրինական լիցենզիայի կանխավարկածի. նման կանխավարկածը հանդիսանում է միավորվելու և հավաքների ազատության արդյունավետ և անարգել իրականացման կենսական տեսակետը: Դատարանը նկատում է, որ իշխանությունների արգելքը կարող էր դիմողներին և մյուս մասնակիցներին կաշկանդող գործոն հանդիսանալ: Շատերը կարող էին ձեռնպահ մնալ այդ հավաքներին մասնակցելուց այն պատճառով, որ դրանք պաշտոնապես թույլատրված չէին, ուստի և իշխանությունների կողմից չէր երաշխավորվի պաշտոնական պաշտպանություն ընդդեմ հնարավոր հակառակորդ հակա-ցուցարարների:

68. Այսպիսով, Դատարանը գտնում է, որ երբ հավաքները տեղի են ունեցել, դիմողները կրել են թույլտվության մերժման բացասական ազդեցությունը: Դատարանը նկատում է, որ առկա իրավական պաշտպանության միջոցները չէին կարող շտկել իրենց վիճակը, քանզի վերաքննիչ վարույթի արդյունքում ընդունված համապատասխան որոշումներն ընդունվել էին հավաքների անցկացման օրվանից հետո: Դատարանն այս կապակցությամբ հղում է կատարել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի առնչությամբ իր եզրահանգմանը (տե՛ս ստորև՝ կետ 84): Ուստի տեղի է ունեցել միջամտություն Կոնվենցիայի 11-րդ - հոդվածով երաշխավորված՝ դիմողների իրավունքին:

69. Միջամտությունը հանդիսանում է 11-րդ հոդվածի խախտում, եթե այն «նախատեսված չէ օրենքով», չի հետապնդում 2-րդ կետում նշված մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակ և «անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում» այդ նպատակներին հասնելու համար:

70. Այս կապակցությամբ, Դատարանը նկատում է, որ Տեղական ինքնակառավարման վերաքննիչ խորհրդի 2005թ. օգոստոսի 22-ի որոշմամբ 2005թ. հունիսի 3-ի որոշումը ճանաչվել է անօրինական (տե՛ս վերը՝ կետ 20): Նմանապես, 2005թ. հունիսի 17-ին Մագովչեի կառավարիչը վերացրել է 2005թ. հունիսի 9-ի որոշումը՝ գտնելով, որ դրանք խախտել են դիմողների՝ հավաքների ազատությունը (տե՛ս վերը՝ կետեր 22-26): Ուստի Դատարանը գտնում է, որ դիմողների խաղաղ հավաքների ազատության իրավունքին միջամտությունը նախատեսված չէ օրենքով:

71. Միջամտության օրինականության հարցի քննության համատեքստում Դատարանը նկատում է, որ, ի լրումն, գործին առնչվում է նաև սահմանադրական տրիբունալի 2006թ. հունվարի 18-ի որոշումը: Դատարանը գտնում է, որ դիմողների գործում կիրառված՝ ճանապարհային երթևեկության մասին օրենքի դրույթները ճանաչվել են հավաքների ազատության սահմանադրական երաշխիքներին հակասող: Դատարանը նկատում է, որ ազատության իրականացման՝ վիճարկված դրույթներով սահմանված սահմանափակումները խախտում են համամասնության սկզբունքը, որը կիրառվում է Կոնվենցիայով երաշխավորվող բոլոր իրավունքների իրականացման սահմանափակումների առնչությամբ (տե՛ս վերը՝ կետեր 39-42):

Դատարանը քաջատեղյակ է, որ Սահմանադրության կիրառելի դրույթների համաձայն՝ այս դրույթները սույն գործի իրադարձություններից հետո կորցրել են իրենց պարտադիր ուժը (տե՛ս վերը՝ կետ 30): Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ Սահմանադրությամբ երաշխավորված հավաքների ազատությանը վիճարկվող դրույթների հակասության ճանաչումը սահմանադրական տրիբունալի կողմից էլ ավելի է ամրապնդում Դատարանի եզրակացությունն առ այն, որ սույն գործում վիճարկվող միջամտությունը եղել է անօրինական:

72. Հաշվի առնելով այս եզրահանգումը՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել, թե արդյոք պահպանվել են 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված մյուս երկու պահանջները (իրավաչափ նպատակը և միջամտության անհրաժեշտությունը):

73. Ուստի Դատարանը մերժում է Կառավարության նախնական առարկությունը զոհի կարգավիճակի բացակայության վերաբերյալ և եզրակացնում, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:

B. Կոնվենցիայի 13-րդ հոդվածի ենթադրյալ խախտում

74. Դիմողները նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածի հիման վրա գանգատվել են առ այն, որ, ի խախտումն այս հոդվածի՝ իրենց տրամադրության տակ չի եղել իրավական պաշտպանության որևէ

միջոց, որը հնարավորություն կտար վերջնական որոշում ստանալու ցույցերի ծրագրված օրվանից առաջ:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

1. Կողմերի փաստարկները

75. Կառավարությունը կրկնել է իրավական պաշտպանության միջոցները չսպառելու վերաբերյալ իր պնդումները՝ գտնելով, որ դիմողները պետք է ներկայացնեին սահմանադրական զանգատ՝ վիճարկելով իրենց առնչությամբ կայացված որոշումների հիմքում ընկած նորմերի սահմանադրականությունը:

76. Դիմողները պնդել են, որ այն ժամանակ, երբ առաջին ատյանի որոշումներով իրենց արգելվել է հավաքների կազմակերպումը, իրենք իրենց տրամադրության տակ չեն ունեցել որևէ ընթացակարգ, որը թույլ կտար վերջնական որոշում ստանալ մինչև իրենց կողմից հավաքների ծրագրված օրը: Դրա պատճառն այն է, որ երկրորդ ատյանի մարմինը, վերացնելով առաջին ատյանի որոշումները, իրավասու չէ կայացնելու նոր որոշում: Սա նշանակում է, որ կազմակերպիչները ողջ ընթացակարգը պետք է սկսեին հենց կզբից:

77. Ըստ դիմողների՝ Հավաքների մասին օրենքի 7-րդ բաժնի համաձայն՝ կազմակերպվելիք հավաքի համար հավանություն ստանալու խնդրանքը կարող է ներկայացվել ամենաշուտը ծրագրված հավաքից երեսուն օր առաջ: Դա նշանակում է, որ դրանից շուտ նման խնդրանք ներկայացվել չի կարող: Ըստ լեհական օրենսդրության՝ եթե իշխանությունները գտնում են, որ ծրագրված հավաքը հանդիսանում է «միջոցառում»՝ ճանապարհային երթևեկության մասին օրենքի իմաստով, անհնարին է պահպանել այդ երեսունօրյա ժամկետը՝ հաշվի առնելով երթևեկության կազմակերպմանն առնչվող բազմաթիվ փաստաթղթեր ներկայացնելու՝ այդ օրենքով սահմանված ոչ ողջամիտ և բարդացված պահանջները:

78. Դիմողները եզրակացնում են, որ, ամեն դեպքում, պետությունը պարտավոր է ստեղծել այնպիսի ընթացակարգ, որը հնարավորություն կտա հանրային հավաքների կազմակերպիչներին ողջ գործընթացն ավարտել օրենքով սահմանված ժամկետում, այն է՝ ծրագրված օրվանից առաջ երեսունից մինչև երեք օր շուտ, և որ ամենակարևորն է, մինչև հավաքի ծրագրված օրը:

2. Դատարանի գնահատականը

79. Դատարանը կրկնում է, որ 13-րդ հոդվածը պահանջում է ներպետական պաշտպանության միջոցի տրամադրում, որը թույլ կտա ներպետական իրավասու մարմնին ըստ էության քննության առնել կոնվենցիոն զանգատին առնչվող խնդիրը և միաժամանակ կապահովի իրավունքի վերականգնումը՝ չնայած նրան, որ պետություններն ունեն որոշ հայեցողություն այն հարցում, թե ինչպես պետք է կատարեն այս հոդվածով ստանձնած իրենց պարտավորությունները (տե՛ս, ի թիվս այլոց, Չահալն ընդդեմ Սիացյալ Թագավորության, 1996թ. նոյեմբերի 15-ի վճիռ, Չեկոսլոցներ 1996-V, էջեր 1869-70, կետ 145):

Սույն գործում Դատարանը գտել է, որ դիմողների՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածով նախատեսված իրավունքը խախտվել է (տե՛ս վերը՝ կետ 73): Ուստի, նրանք ունեցել են վիճելի զանգատ՝ Դատարանի նախադեպային իրավունքի իմաստով, և ուստի իրավունք են ունեցել 13-րդ հոդվածի պահանջները բավարարող պաշտպանության միջոցի:

80. Ինչ վերաբերում է Կառավարության կողմից անհատական սահմանադրական զանգատը մատնանշելուն, Դատարանն առաջին հերթին նկատում է, որ լեհական վարչական դատավարության համատեքստում առկա է երկրորդ ատյանի վարչական որոշումների նկատմամբ երկաստիճան դատական վերահսկողություն: Սիայն Գերագույն վարչական դատարանի որոշումն է համարվում վերջնական որոշում, որի կապակցությամբ կարող է սահմանադրական զանգատ ներկայացվել: Սույն գործում, դիմողները, ստանալով երկրորդ ատյանի վարչական մարմինների՝ իրենց օգտին կայացված որոշումները, որոնցով վերացվել են թույլտվությունը մերժող որոշումները, չունեին որևէ իրավական շահ այդ որոշումները վարչական դատարաններում բողոքարկելու հարցում: Ուստի դեպի սահմանադրական տրիբունալ նրանց ճանապարհը բաց չէր:

81. Ավելին, Դատարանն ընդունում է, որ վարչական մարմինները ճանաչել են, որ դիմողների գործում առաջին ատյանի որոշումները խախտել են կիրառելի օրենքները: Այնուամենայնիվ, Դատարանն

ընդգծում է, որ դա արվել է ցույցերի անցկացման ծրագրված օրվանից հետո: Դատարանը նկատել է, որ սույն գործը համանման է Stankov and the United Macedonian Organization Ilinden ընդդեմ Բուլղարիայի գործին (թիվ 29221/95 և 29225/95, 1998թ. հունիսի 29-ի Հանձնաժողովի որոշում), որում նախկին Հանձնաժողովը որոշել է, որ «եթե դիմողները փորձեին քաղաքապետի արգելքը վիճարկող բողոքի քննության՝ շրջանային դատարանի մերժումը բողոքարկել, ապա բողոքի քննությունը կտևեր ամիսներ և ցանկացած բարենպաստ արդյունք կհաջորդեր ծրագրված հավաքի օրվան»: Այլ կերպ ասած, հաշվի առնելով, որ հավաքների օրն էական նշանակություն ունենալու կազմակերպիչների և մասնակիցների համար, և կազմակերպիչները ժամանակին են ծանուցել իրավասու մարմիններին, Դատարանը գտնում է, որ տվյալ հանգամանքներում, արդյունավետ պաշտպանության միջոցի հասկացությունը ենթադրում է որոշումը մինչև հավաքների ծրագրված օրն ստանալու հնարավորություն:

82. Այս կապակցությամբ, Դատարանը գտնում է, որ ժողովրդավարական բանավեճի բնույթն այնպիսին է, որ որոշակի հիմնախնդիր բարձրացնելու նպատակով հանրային հավաքի օրը կարող է վճռական նշանակություն ունենալ այդ հավաքի քաղաքական և սոցիալական կշռի համար: Ուստի պետական մարմինները կարող են որոշ հանգամանքներում մերժել ցույցի կազմակերպման թույլտվությունը, եթե նման մերժումը համապատասխանում է Կոնվենցիայի 11-րդ հոդվածին, սակայն չեն կարող փոխել հավաքի ծրագրված օրը: Եթե հանրային հավաքը կազմակերպվում է այն բանից հետո, երբ տվյալ սոցիալական խնդիրը կորցնում է իր հրատապությունն ու կարևորությունն ընթացիկ սոցիալական կամ քաղաքական բանավեճում, հավաքի ազդեցությունը կարող է լրջորեն վտանգվել: Հավաքների ազատությունը, եթե խոչընդոտվում է դրա ժամանակին կազմակերպումը, կարող է դառնալ անհիմաստ:

83. Ուստի Դատարանն այն կարծիքին է, որ հավաքների ազատության արդյունքից արդյունավետորեն օգտվելու համար կարևոր նշանակություն ունի այն, որ կիրառելի օրենքները սահմանեն այնպիսի ժամկետներ, որոնց ընթացքում պետական մարմինները, համապատասխան որոշումներ կայացնելիս, կարողանան գործել: Կիրառելի օրենքները նախատեսում էին ժամկետներ դիմողների կողմից թույլտվության կապակցությամբ խնդրանք ներկայացնելու համար: Դրան հակառակ, իշխանությունների համար իրենց որոշումը կայացնելու առումով որևէ ժամկետ սահմանված չէր: Ուստի Դատարանը համոզված չէ, որ սույն գործում դիմողների համար առկա պաշտպանության միջոցները, որոնք բոլորն էլ post-hoc բնույթի են, կարող էին ապահովել պատշաճ հատուցում կոնվենցիոն ենթադրյալ խախտումների համար:

84. Ուստի Դատարանը գտնում է, որ դիմողներին մերժվել է պաշտպանության արդյունավետ միջոցը՝ կապված իրենց հավաքների ազատության խախտման վերաբերյալ գանգատի հետ: Հետևաբար, Դատարանը մերժում է Կառավարության նախնական առարկությունը՝ կապված ներպետական պաշտպանության միջոցները չսպառելու հետ, և եզրակացնում, որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի հետ համակցված:

C. Կոնվենցիայի 14-րդ հոդվածի ենթադրյալ խախտում՝ համակցված 11-րդ հոդվածի հետ

85. Դիմողները պնդել են, որ իրենց նկատմամբ դրսևորվել է խտրական վերաբերմունք, ինչն արտահայտվել է նրանում, որ իրենց մերժվել է երթի և մի քանի ցույցերի կազմակերպումը: Նրանք հիմնվել են 11-րդ հոդվածի վրա՝ զուգորդված Կոնվենցիայի 14-րդ հոդվածի հետ, որը նախատեսում է.

«Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրույթունից, ծննդից կամ այլ դրույթունից»:

1. Կողմերի փաստարկները

86. Կառավարությունը նշել է, որ դիմողները վիճարկել են վարչական մարմինների կողմից 2005թ. հունիսի 3-ին և 5-ին ընդունված որոշումները: Առաջին որոշմամբ երթևեկության հարցերով պատասխանատուն, գործելով Վարչավայի քաղաքապետի անունից, մերժել է երթի թույլտվությունը՝ հիմք ընդունելով այն, որ կազմակերպիչները ճանապարհային երթևեկության մասին օրենքի 65 (a) բաժնին համապատասխան չեն ներկայացրել «երթևեկության կազմակերպման ծրագիր»: Մյուս որոշմամբ քաղաքապետը հիմնվել է այն փաստարկի վրա, որ դիմողները չեն կատարել այն ավելի խիստ պահանջները, որոնք օրենքով սահմանվում են երթևեկի ճանապարհներին հավանքների կազմակերպիչների համար:

87. Կառավարությունն այն կարծիքին է, որ այս որոշումները բավարար չափով պատճառաբանված են և նրանց պատճառաբանությունները հիմնվում են ճանապարհային երթևեկության մասին օ-

րենքի 65 հոդվածի վրա: Ըստ Կառավարության՝ չի կարելի ենթադրել, որ հավաքները չթույլատրելու որոշումները կրել են Վարչապալայի քաղաքապետի անձնական կարծիքների ազդեցությունը, որոնք ներկայացված էին 2005թ. մայիսի 20-ին «Gazeta Wyborcza»-ում տպագրված հարցազրույցում: Գործի հանգամանքները չեն վկայում այն մասին, որ առկա է որևէ կապ քաղաքապետի՝ մամուլում արտահայտած կարծիքների և դիմողների գործով ընդունված պաշտոնական որոշումների միջև:

88. Կառավարությունը պնդել է, որ սույն գործում որևէ դրույթ, պետական մարմինների որևէ գործողություն կամ անգործություն դիմողների նկատմամբ հանդիսացել է նվազ բարենպաստ վերաբերմունքի դրսևորում, քան համարժեք պայմաններում կոդուստրվեր ուրիշ այլ անձանց նկատմամբ: Չկա որևէ ապացույց առ այն, որ այս վերաբերմունքը հիմնվել է որևէ արգելված հիմքի վրա: Հետևաբար, դիմողները չեն ենթարկվել խտրականության՝ կապված իրենց հավաքների ազատությունից օգտվելու հետ՝ ի խախտումն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի:

89. Դիմողներն ընդգծել են, որ իրենցից պահանջվել է ներկայացնել «երթևեկության կազմակերպման ծրագիր», մինչդեռ այլ կազմակերպիչներից նման ծրագիր չի պահանջվել: Առանց արդարացնող որևէ որոշակի լուրջ պատճառի և նման տարբերակված մոտեցման համար Կառավարության կողմից որևէ պատճառ չներկայացնելու պայմաններում նման ծրագիր ներկայացնելու պահանջի ընտրանքային կիրառումը վկայում է այն մասին, որ իրենց նկատմամբ խտրականություն է դրսևորվել:

90. Դիմողները պնդել են, որ խտրականությունը դրսևորվել է նաև նրանում, որ իրենց մերժվել է 2005թ. հունիսի 12-ին ցույցերի կազմակերպման թույլտվությունը, մինչդեռ այլ կազմակերպություններ և անձինք ստացել են նման թույլտվություն: Նման տարբերակված վերաբերմունքը չի հետապնդել իրավաչափ նպատակ, քանզի քաղաքապետը և նրա գործընկերները, զուրկ որևէ իրավական հիմքից, հասարակության համար հայտնի են դարձրել, որ ցույցերը կարգելվեն, քանի որ դրանց կազմակերպիչներն ունեն համասեռամուլական հակվածություն:

91. Դիմողներն այնուհետև պնդել են, որ 2005թ. հունիսի 3-ի և 5-ի որոշումները պաշտոնապես ընդունվել են Վարչապալայի քաղաքապետի անունից: Նրանք հղում են կատարել 2005թ. մայիսին տպագրված՝ Վարչապալայի քաղաքապետի հարցազրույցին, որում նա նշել է, որ ինքը կարգելի ցույցերը՝ անկախ նրանից, թե կազմակերպիչները թույլտվության իրենց խնդրանքում ինչ կներկայացնեն: Նրանք նշել են, որ ողջամտորեն չի կարելի եզրակացնել, որ քաղաքապետի հայտարարությունների և նրա անունից հետագայում կայացված որոշումների միջև որևէ կապ չկա: Նրանք ընդգծել են, որ իրենց գործով վարույթի գործնական արդյունքը համապատասխանում է քաղաքապետի հայտարարությունների ոճին:

92. Դիմողները նկատել են, որ Կառավարության փաստարկն առ այն, որ քաղաքապետի հրապարակավ արված հայտարարությունների և նրա անունից կայացված վարչական որոշումների միջև որևէ կապ չկա, կնշանակի ընդունել, որ համապատասխան ժամանակահատվածում քաղաքապետարանում որոշումներն ընդունվել են առանց հաշվի առնելու քաղաքապետի հրապարակային հայտարարությունները, որոնք նա արել է որպես մունիցիպալ վարչակազմի ղեկավար:

2. Դատարանի գնահատականը

93. Դատարանը շարունակաբար գտել է, որ 14-րդ հոդվածն ինքնավար չէ և ազդեցություն ունի միայն կոնվենցիոն իրավունքների հետ հարաբերության մեջ: Այս դրույթը լրացնում է Կոնվենցիայի և Արձանագրությունների մյուս նյութական դրույթները: Այն չունի անկախ գոյություն, քանզի ազդեցություն ունի միայն այդ դրույթներով պահպանվող «իրավունքներից և ազատություններից օգտվելու» հարաբերության վրա: Չնայած նրան, որ 14-րդ հոդվածը չի ենթադրում այդ դրույթների խախտում և այս առումով այն ինքնավար է, դրա կիրառման հնարավորությունը բացակայում է, եթե խնդրո առարկա փաստերը նյութական դրույթներից որևէ մեկի կամ մի քանիսի շրջանակում չեն (տե՛ս, ի թիվս այլոց, Վան Ռալֆին ընդդեմ Նիդեռլանդների, 1997թ. փետրվարի 21-ի վճիռ, Ձեկույցներ 1997-I, էջ 184, կետ 33, Գայգուզուսն ընդդեմ Ավստրիայի, 1996թ. սեպտեմբերի 16-ի վճիռ, Ձեկույցներ 1996-IV, կետ 36):

94. Կողմերի համար անվիճելի է, որ գործի փաստերը Կոնվենցիայի 11-րդ հոդվածի շրջանակում են: Ուստի 14-րդ հոդվածը կիրառելի է գործի հանգամանքների առնչությամբ:

95. Դատարանն առաջին հերթին նկատում է, որ սույն գործում առկա՝ առաջին ատյանի վարչական որոշումները չեն վկայակոչել որևէ ուղղակի շարժառիթ, որը կարող էր որակվել որպես Կոնվենցիայի իմաստով խտրականության արգելված հիմք: Այս որոշումները շեշտադրումը կատարել են հավաքների կազմակերպման տեխնիկական տեսակետների և այդ պահանջներին համապատասխանության վրա (տե՛ս վերը՝ կետեր 11 և 13): Հաստատված է, որ ճանապարհային հարցերով պատասխանատուի մոտ վարույթում դիմողներից պահանջվել է ներկայացնել «երթևեկության կազմակերպման ծրագիր», և նրանց խնդրանքը մերժվել է այդ ծրագիրը չներկայացնելու պատճառով: Մինչև ժամանակ,

Դատարանը նկատում է, որ չի երևում, որ այլ կազմակերպիչների ևս ներկայացվել է միևնույն պահանջը:

96. Դատարանը նաև նկատում է, որ դիմողների՝ երթ կազմակերպելու թույլտվությունը մերժող՝ 2005թ. հունիսի 3-ի որոշումը կայացվել է ճանապարհային հարցերով պատասխանատուի կողմից, որը գործել է Վարչավայի քաղաքապետի անունից: 2005թ. հունիսի 9-ին մունիցիպալ իշխանությունները, գործելով քաղաքապետի անունից, արգելել են առաջին հինգ դիմողների կողմից հավաքների կազմակերպումը՝ վկայակոչելով 2005թ. հունիսի 12-ին տեղի ունենալիք տարբեր ցույցերի մասնակիցների միջև հնարավոր բախումները կանխելու անհրաժեշտությունը: Անվիճելի է նաև, որ նույն օրը նշված մարմինները թույլատրել են վեց հակացույցերի կազմակերպում միևնույն օրը:

97. Դատարանը չի կարող ենթադրություններ անել սույն գործում խնդրո առարկա հավաքների մերժման շարժառիթների առկայության վերաբերյալ, բացառությամբ այն շարժառիթների, որոնք հստակորեն արտահայտված են վիճարկվող վարչական որոշումներում: Այնուամենայնիվ, Դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ 2005թ. մայիսի 20-ին տպագրվել է քաղաքապետի հարցազրույցը, որում նա հայտարարել է, որ կմերժի թույլտվությունների տրամադրումը (տե՛ս վերը՝ կետ 27):

98. Դատարանը կրկնում է, որ ըստ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի՝ քաղաքական ելույթի և հասարակական հետաքրքրության հարցերի վերաբերյալ բանավեճի սահմանափակումների շրջանակը նեղ է, մասնավորապես, հենց քաղաքական գործիչների առնչությամբ (տե՛ս Սուրեկն ընդդեմ Թուրքիայի, (թիվ 1) (GC) թիվ 26682/95, կետ 61, ECHR 1999-IV, Կաստելսն ընդդեմ Իսպանիայի, 1992թ. ապրիլի 23-ի վճիռ, Շարքեր A թիվ 236): Այնուամենայնիվ, ընտրված քաղաքական գործիչների արտահայտվելու ազատության իրականացումը, ովքեր միաժամանակ իշխանության գործադիր ճյուղում պետական պաշտոններ զբաղեցնող անձինք են, ենթադրում է որոշակի պատասխանատվություն: Որոշակի իրավիճակներում քաղաքացիների իրավունքների վրա ազդեցություն ունեցող վարչական որոշումների ընդունումն անձամբ նման պաշտոնատար անձանց կողմից կամ վերջիններիս անունից՝ պետական ծառայողների կողմից, այդ պաշտոնատար անձանց պարտականությունների բնականոն մասն է (քրեական գործով վարույթի ընթացքում պետական պաշտոնյաների կողմից անձին մեղավոր ճանաչելու կապակցությամբ հայտարարությունների առնչությամբ, տե՛ս Բուտկևիչուսն ընդդեմ Լիտվայի, թիվ 48297/99, կետ 53, ECHR 200-II (քաղվածքներ), տե՛ս նաև Ալլեն դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի, 1995թ. փետրվարի 10-ի վճիռ, Շարքեր A թիվ 308, էջ 16, կետեր 35-36, Դակտարասն ընդդեմ Լիտվայի, թիվ 42095/98, կետեր 41-44, ECHR 2000-X): Իրենց արտահայտվելու ազատությունն իրականացնելիս նրանցից պահանջվում է դրսևորել զսպվածություն՝ հիշելով, որ իրենց տեսակետները կարող են ընկալվել որպես ցուցում քաղաքացիական ծառայողներին, որոնց աշխատանքը և կարիերան կախված են իրենց հայեցողությունից:

99. Դատարանը, հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում հավաքների և միավորվելու ազատության կարևոր դերը, նաև այն կարծիքին է, որ նույնիսկ խտրականության չնչին դրսևորումները կարող են որոշակի կարևորություն ունենալ այն վարչական վարույթներում, որոնցում գործադիրն իր գործառնություններն իրականացնում է անձի ազատությունների իրացման առնչությամբ: Դատարանը լիովին իրազեկ է վարչական և դատական վարույթների միջև տարբերություններին: Միայն վերջինիս առնչությամբ է Կոնվենցիան իր 6-րդ հոդվածում պահանջում, որ գործը լուծող տրիբունալը պետք է անկախ լինի և՛ սուբյեկտիվ, և՛ օբյեկտիվ առումով (Ֆինդլին ընդդեմ Միացյալ Թագավորության, 1997թ. փետրվարի 25-ի վճիռ, Չեկույցներ 1997-I, կետ 73, Վարսիկան ընդդեմ Լեհաստանի, կետեր 34-37, թիվ 2065/03, 2007թ. հունվարի 16-ի վճիռ):

100. Այնուամենայնիվ, սույն գործում Դատարանը գտնում է, որ գործը զնահատելիս ինքը չի կարող անտեսել քաղաքապետի կողմից հրապարակավ արտահայտված անձնական կարծիքներն այն հարցերի վերաբերյալ, որոնք ուղղակիորեն առնչվում են հավաքների ազատության իրականացման վերաբերյալ ընդունված որոշումներին: Դատարանը նկատում է, որ խնդրո առարկա որոշումները կայացվել են մունիցիպալ մարմինների կողմից, որոնք գործել են քաղաքապետի անունից և այն բանից հետո, ինչ քաղաքապետը հրապարակավ արտահայտել է իր կարծիքը հավաքների ազատության իրականացման և «համասեռամոլության քարոզչության» մասին (տե՛ս վերը՝ կետ 27): Դատարանը նաև նշում է, որ քաղաքապետի կողմից այս կարծիքներն արտահայտելու ժամանակ հավաքներն անցկացնելու համար թույլտվության հարցի քննարկումը մունիցիպալ մարմիններում դեռևս շարունակվում էր: Դատարանը գտնում է, որ ողջամտորեն կարելի է ենթադրել, որ նրա կարծիքները կարող էին ազդեցություն ունենալ սույն գործում որոշման կայացման գործընթացի վրա և արդյունքում խտրական մոտեցմամբ խախտել դիմողների՝ հավաքների ազատության իրավունքը»:

101. Գործի հանգամանքները հաշվի առնելով իրենց ամբողջության մեջ՝ Դատարանն այն կարծիքին է, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի խախտում՝ համակցված Կոնվենցիայի 11-րդ հոդվածի հետ:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

102. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

103. Դիմողները Կոնվենցիայի խախտման կապակցությամբ արդարացի բավարարման որևէ պահանջ չեն ներկայացրել:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. Մերժում է Կառավարության նախնական առարկությունները,
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում,
3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում՝ համակցված 11-րդ հոդվածի հետ,
4. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ համակցված 11-րդ հոդվածի հետ:

Կատարված է անգլերենով և ծանուցված է գրավոր 2007թ. մայիսի 3-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի: